

պատժուի մինչդեռ Աստուծոյ անունով սուտ երգութեամբ պատրաստ է: Մահմեդական արեւելքի բոլոր երկրներում այժմ ևս այնպիսի աղանդներ կան տարածուած: որոնց կրօնը հեթանոսութեան, քրիստոնէութեան և իսլամի մի տարօրինակ խառնուրդ է ներկայացնում: այդպէս Դրուզները իղմայլքի, Նոսսայիլքի, Դեղիզները ևլն: Պարսկաստանում զրադաշտականութիւնն ու մանիքեցութիւնն են ծածկուած մնում մահմեդական քօղի տակ: և մինչև իսկ բուդդայականութիւնը Հնդկաստանից իսլամի վերայ ազդեցութիւն է ունեցել: Սակայն հէնց այդ հանգամանքը որ իսլամն այդպէս սերտ կերպով միացել է ժողովրդի հաւատքի հետ՝ տալիս է նորան իւր իր կրօնի ունեցած զօրութիւնը և ապահովում նորա գոյութիւնը:

Ասածներկցա ըստ բաւականին հետեւում է: Թէ ինչ հիմանց վերայ իսլամն անմատչելի է քրիստոնէութեան կողմից եկած ազդեցութեանց համար: Նոր հետազօտութեանց շնորհիւ գնալով աւելի և աւելի է պարզուում: որ իսլամը պէտք է հրէութեան վերայ պատուաստած մի խորթ շառաւիղ համարուի: Արդ եթէ մտածենք: Թէ ինչպիսի տոկունութեամբ հրէաները որ դարերէ ի վեր համեմատաբար փոքրիկ համայնքներով ապրում են Նւրոպայում՝ դիմադրել են քրիստոնէական ազդեցութեան: և ինչպէս դժուար է նոցա համար հրաժարուիլ իրենց սեփական աշխարհայեցողութիւնից և բարբից՝ այլ ևս զարմանալի չի լինի: որ մահմեդականութիւնը իւր ամբողջական ամփոփ դրութեամբ շատ աւելի զօրեղ կերպով է հակառակում այդպիսի ազդեցութիւններին: Առանց այն էլ բաժան բաժան եղած քրիստոնէութիւնը նոյնքան աւելի անզօր է նորա դիմաց: որքան եւրոպական պետութեանց քաղաքականութիւնը պահանջում է ամեն պայմանով անփոփոխ պահել իրերի դրութիւնն արեւելքում:

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ:

ԿԱԹՈՒՆԻ ԵՆԵՂԵՑԻ:

— Եկեղեցիների միութեան խընդրին նուիրուած մի ամսաթերթ է լոյս տեսնում այժմ Հռովմում: Այդ հրատարակութիւնը կոչում է «Իեսուսի» այն յոյն ծիրանաւորի անուամբ: որ 15-դ դարում մեծ ծիւղն էր թափում արեւմտեան եկեղեցու հետ արեւելանը միացնելու և մասնակցեց Գերբարայի ու Ֆլորենցիայի եկեղեցական ժողովին: Իւր ծրագրի մէջ ամսագրի խմբագրութիւնն յայտնում է: որ կամենում է հետեւել Լեոն ԺԳ. պապի միութեան երկու շրջաբերականներին «Praeae» (1894 թ. 20 յունիսի) և «Orientalium dignitas» (1894 թ. 30): «Իեսուսի» պէտք է հետեւի արեւելեան եկեղեցու լեզուին և ուղղութեան: մենք պէտք է—ասուած է այդ ծրագրում—մասամբ մոռանաք: որ լատին ենք: և միայն մտածենք: որ նոյն Հօր զաւակներ ենք մեր արեւելեան բաժանուած եղբայրների հետ: «Իեսուսի» մի քանի համարներն արգէն իսկ լոյս են տեսել: որոնցից երկուսն է խմբագրութեան մեծ ջանքը: Ծրագրին համաձայն «Իեսուսի» պիտի լոյս տեսնէր երկու լեզուով՝ իտալերէն և յունարէն: բայց առ այժմ միայն իտալերէն է հրատարակուում և բաւական մեծ թուով համակրողներ ունի:

— ԺԹ. դարի վերջը պիտի յաւերժանայ մի համաշխարհային կաթողիկական ցոյցով: Բողոնիայում այս նպատակով մի յանձնախումբ է կազմուել: որի նախագահն է Վոմս Աբուաղեբնի: Ահա թէ սա ինչ է գրում Պապին: «Մենք կամենում ենք մի միջազգային յանձնաժողով հիմնել և օր առաջ բոլոր աշխարհի կաթողիկոսների պատրաստել: ԺԹ. դարավերջը մի ընդհանուր և հանդիսաւոր գոհարանութեամբ առ Փրքիչն մեր Յիսուս Քրիստոս: ինչպէս առ նորա փոխանորդն երկրիս վրայ: առ հոգովեական պապն: սիրոյ: հնազանդութեան և հաւատարմութեան յայտարարութեամբ տօնելու:» Հռովմայ պապն հաւանութիւն է տուել այս մտքերին և յանձնախմբին ուղարկել է առաքելական օրհնութիւն:

— Հակամաստեան շարժումը կաթողիկոսների մէջ մեծ յառաջդիմութիւն է գործում: սեպտեմբերի 26-ին Տրիէնտում տեղի ունեցաւ միջազգային մի համաժողով ընդդէմ մասոնների: Այս համաժողովի մէջ կազմուեցան Եւրոպիոյ զանազան ազգերի մէջ գործելու համար ազգային յանձնախմբեր: որոնց կենդրոններն են Հռովմայ, Տուրինը, Փարիզը, Վեննան, Պեշտը, Բեռլինը, Լիսսաբոնն ևլն: Գերմանական կաթողիկոսների ժողովը Դորմունդում նոյնպէս յարեցաւ այդ

ուղղութեան, որ պայան առանձնապէս յանձնարարել է կաթողիկոսներին:

— Լուովմի ձգտումներն անգլիկան եկեղեցին կրկին Պապին հպատակեցնելու՝ անյաջող ելք ունեցան: Յարդ կաթողիկոսները յոյսեր էին տալիս, որ Պապը պէտք է ծանաչէ անգլիկան եկեղեցու ձեռնադրութեան վաւերականութիւնը: այժմ բացարձակապէս յայտարարուած է, որ Լեոն ԺԳ. պայան անվաւեր է ծանաչում այդ եկեղեցու ձեռնադրութիւնը: Պապը մի շրջաբերական է հրատարակել «Apostolicae curae» խօսքերով սկսուող, որի մէջ յայտնում է՝ որ ինքը երկարատե հետախօզութիւններ անել տալուց յետոյ, հաստատում է իւր նախորդների վճիռները անգլիկան ձեռնադրութեան անվաւեր լինելու մասին: Պապի թուղթն հրաւիրում է Անգլիացիներին, միանալ կաթողիկոսեան հետ:

— Էպիսկոպոս կոտորածների մասին Գերպ. Աղարեանը զեկուցումն է տուել Պապին, որ կարգով տաճկական դադանութիւնները լաց է եղել և անմիջապէս հրամայել, որ հնարաւոր օգնութիւնը ցոյց տրուի կարօտեալներին: Սրտի նոյն քննքնութիւնը սակայն չունի Գերպ. Աղարեանը, որ այս օրերս ներկայացել է սուլթանին և լսել է նրա գովասանքը հայ կաթողիկոսների հաւատարմութեան մասին: լրագիրների ասելով՝ այսուհետեւ հայ կաթողիկոսի անուան փոխանակ պիտի գործ դրուի օսմանցի—կաթողիկոս անունը Աղարեանի հօտի համար: Աղարեանից յետ չէ մնացել և մի այլ կաթողիկոս եկեղեցական: Անգլիայի պրիմաս Վոգանը հրաժարուել է մասնակցելու յօգուտ հայոց եղած ցոյցին:

— Փրանսիական ժողովրդի կրօնական ուղղութեան մասին սխալ կարծիք կարելի է կաղմնել, եթէ ուշք դարձնենք այդ ազգի քաղաքական գործիչների և առօրեայ մամուլի խօսքերին: Այդ մամուլը շարունակ կռուում է կրօնի դէմ և հալածում է կղերին: Քաղաքական գործիչներից ով չէ կամենում ասպարէզը թողնել, պէտք է իւր ծրագրի մէջ մտնի եկեղեցու տէրութիւնից բաժանելը: Սակայն դրանցից ամենայնգուցին անգամ գործերի գլուխն անցնելով յետ է կացել ցարդ իւր ծրագրերից: Ռուսաց Մեծազօր Վայսեր այցելութեան միջոցին նախարարութիւնը դուրս էր ձգել պաշտօնական անձանց ցուցակից Փարիզի արքեպիսկոպոսին, իսկ տեսնելու արժանի յիշատակարաններից նոտր—Դամը: սակայն ՆՈՐԻՆ ՄԵՏՈՒԹԻԻՆԸ ԻՒԻ ձեռքով ծրագրի գլխին աւելացրեց այդ երկու կէտերն ևս և ոչ ոք չընդգիմացաւ դրան: Այս առթիւ Փարիզի արքեպիսկոպոսը շրջաբերականով պատուիրել է Փրանսիայի եկեղեցականութեան աղօթել Մեծազօր Վայսեր կենաց համար:

Եթէ այս արտաքին երևոյթներով դատենք, Փրանսիացիներին պիտի հակադրականացնէ համարենք, սակայն մի՞թէ այսպէս է: Զը նայելով դրականական օրէնքներին, այսօր ազատ դպրոցները կղերի ձեռքին են Փրանսիայում: ուր աղետակաւնութիւն և քաղաքացիք իրենց որդւոց կրթութիւնը յանձնում են կղերականներին: նոյն իսկ քաղաքական գործիչները կրթել են տալիս իրենց որդւոց հոգևորականների դպրոցներում: Ով ծանօթ է Լուրդի ուխտագնացութեանց և Յիսուսի Սրտի տօնակատարութեան, նա գիտէ՝ թէ ի՞նչքան զօրաւոր է դեռ կրօնն և նրա հետ կղերականութիւնը Փրանսիայում: Օգոստոսի վերջին Ռայմոնդ կաթողիկոս քահանայից մի համաժողով տեղի ունեցաւ, ուր արքա Լիմիլի առաջնորդութեամբ ժողովուած էին 7—800 քահանայք, որոնք ընդարձակ ծրագրի մշակեցին քահանայից բռնելիք գիրքի և գործունէութեան համար: Այստեղ որոշուեցաւ որ քահանայք աւելի մօտենան ժողովրդին, երիտասարդաց և կոյսերի ընկերութիւններ կազմեն, անկրօն դպրոցների աշակերտներին կրօնական կրթութիւն տալու ծանապարհներ գտնեն ևլն:

Անհաւատութեան վիճակագրութիւնն անգամ հաստատում է, որ Փրանսիան այն չէ ինչ որ երևում է. օրինակ առանց եկեղեցական արարողութեան թաղուողների թիւը նոյն իսկ Փարիզում 25%-ից աւելի չէ, իսկ դաւաճներում քաղաքական թաղումն անձանթ իսկ է: Այսպէս գիւղական համայնքներում քաղաքական ամուսնութիւններն ու մկրտութիւնից հրաժարուելն անօրինակ են:

— Պապերի մէջ ցարդ ոչ ոք չէ եղել յիսուսեանների կարգից, որովհետեւ այդ կարգի կանոններն արգելում են մեծամեծ եկեղեցական պաշտօնների վարումն, թէպէտ և ցարդ բացառութիւններ եղել են ծիրանաւորների վերաբերութեամբ: Կաթողիկոսները շատ են վախճում, որ մի օր պապութիւնն էլ ընկնի յիսուսեանների ձեռքը, որովհետեւ այնուհետեւ նրանք էլ ձեռքից բաց չեն թողնիլ պապութիւնը: Լեոն ԺԳ. շատ համակիր է յիսուսեաններին. այսօր ծիրանաւորների ժողովում կան երկու յիսուսեաններ, որ ցարդ չը տեսնուած իրողութիւն է: Այդ երկու ծիրանաւորներն են Մացելլա և Հոպինհուէր, որոնց ոմանք համարում են պապացու (papabile):

ՕՐԹՈՂՈՔՍ ԵՎԵՂԵՑԻ:

ՌՈՒՄԼՍ ԾԵՆՉԵՑԻ:

Ինչպէս յայտնի է, անցեալ օգոստոս ամսին օծուեցաւ Կիեվում ս Վլադիմիրի անուան նուիրում փառահեղ նոր տաճարը: Церковный Вѣстник-ի թերթի №39 այդ առթիւ գրուած յօդուածից քաղում ենք հետեւեալ տեղեկութիւնները:

Ս. Վլադիմիրի տաճարի համար նախագիծ կազմուել է Նիկողայոս Ա. կայսեր օրով, հիմքը ձգուել է Աղեքսանդր Բ.-ի շինութիւնը վերջացել Աղեքսանդր Գ.-ի և օծուել ներկայ Վեհ. կայսեր օրով, Շինութեան գործին մասնակցել է գրեթէ ամբողջ ռուս ժողովուրդը իւր նուէրներով, բայց նա նշանաւոր է ոչ միայն այս պատճառաւ, իրրեւ համազգային մի յուշարձան, այլ նաեւ ճարտարապետական, գեղարուեստական տեսակետից, — Տաճարի շինութիւնը սկսուեցաւ 1862 թուին, բայց 1865 թուին, երբ նա արդէն այնքան յառաջ էր գնացել, որ սկսեցին մեջտեղի մեծ գմբէթը գնել, երեւաց որ ճարտարապետը պատերի հաստութիւնը սխալ էր հաշուել. բազմաթիւ ճեղքեր առաջացան և հարկ եղաւ դադարեցնել աշխատութիւնը և փակել շէնքը, ինչպէս և մնաց մինչև 1875 թիւը, Այդ տարին Կիևի քաղաքը բաղդ ունեցաւ հիւրընկալելու Աղեքսանդր Բ. կայսեր, որ և բարեհաճեց հրամայել նորոգելու կիսատ մնացած շինութիւնը, Պրոֆ. Բենդարտ հաշուեց, որ 200,000 ռուբլով կարելի կլինի բոլոր գործը գլուխ հանել (հիմնարկութեան ժամանակ ծախք էր նշանակուած 120,000 ռուբլի). յաջորդ տարին աշխատութիւնը վերսկսուեցաւ և 1882-ին ամեն արգելքներ յաղթելուց յետոյ շէնքն արդէն պատրաստ էր. — Գրսից նա բիւզանդական բազիլիկի ձև ունի, ճաշակով զարդարուած է իւր և հոյակապ տեքքով շատ զօրեղ տպաւորութիւն է թողնում, որին քիչ չէ նպաստում նաև տաճարի բարձր, նկարչական դիրքը, Նորա եօթն ոսկեզօծ գմբէթները արևի ճառագայթների ներքոյ իրենց փայլը տարածում են հեռուն ամբողջ քաղաքի վերայ. — Ներսից նա պակաս հոյակապ և զարդարուն չէ. Նորա երկայնութիւնն է 23', իսկ լայնութիւնը 13', սաժէն. բարձրութիւնը մինչև գմբէթի խաւը 23', իսկ մեծ գմբէթի տրամագիծը 13 սաժէն, Պատերի ստորին մասերը, բեմը և լին. գոյնզգոյն մարմարիներից են և ճոխ կերպով զարդարած. առանձնապէս շքեղ են կայսերական գահը և քարոզչական ամբիոնը, Տաճարը լուսաւորուում է ելեքտրականութեամբ, Նորա գլխաւոր զարդը կազմում են իսկապէս պատերի վրայ նկարած փառահեղ պատկերները, որոնք բոլորը առաջնակարգ նկարիչների գործ են, Միայն գլխաւոր բեմի նկարների համար նկարիչ Վասնեցովը 12 տարուայ տոկուն աշխատանք է գործ դրել. կեդրոնական տեղը բռնում է և նորա գործոց գլուխ կարող է համարուիլ այստեղ ս. Աստուածածնի 12 արշին մեծութեամբ պատկերը, որ և իսկոյն գրաւում է ներս մտնողի ուշադրութիւնը և մեծապէս ազդում նորա հոգու և մտքի վերայ. — Այսպիսով ս. Վլադիմիրի տաճարը իւր մեծութեամբ և ճոխութեամբ յետ է մնում միայն Մոսկուայի «Բրիտան Փրիլի» տաճարից, բայց իւր

գեղարուեստական արժէքով գերազանցում է նորան.

— Նոյն թերթն իւր 42 համարում յառաջ է բերում Ֆրանսիացի կանոնիկոս Ժոնկէյի մի նամակը Նոյնի Վայսերական Մեծութեանց խոստովանահայր Ծանիշեյին, որի նպատակն է ցոյց տալ, թէ ինչպէս Նոյնի Մեծութեանց Թագաւոր Վայսեր և Վայսերուհու այցելութիւնը Ֆրանսիայում մեծապէս նպաստել է կրօնական ոգին զարթեցնելու, եկեղեցւոյ վարկը բարձրացնելու, և թէ ինչպէս կաթոլիկ հոգեւորականութիւնը աւելի մեծ ցոյցերով հանդէս կգար իւր համակրութիւնն ու երախտագիտութիւնն արապայտելու, եթէ երկրի օրէնքներն արգելքներ չդնէին, նա ողջունում է օրթոդոքս հոգեւորականներին իրրեւ ի Բրիտան եղբայրների, և թերթի խմբագրութիւնը ուշադրութիւն հրաւիրելով այն գեղեցիկ արապայտութեան վերայ, որ գտնում է այս նամակի մէջ տարբեր քրիստոնեաներին իրար հետ միացնող կապը՝ ոգեւորուում է այն համոզմամբ, թէ «չկայ այնպիսի մի անջրպետ, որ ի Բրիտան եղբայրական սիրոյ առաջ կարող լինէր դիմանալ»:

ԱՊՐԷԼԻԱՆ ԾԾՆՆԵԹԻ.

Սեպ. 29-ին (հոկտ. 11-ին) Համարդէնում վախճանեցաւ Անգլիկան եկեղեցւոյ գլուխ Անտրըրըրի Բենսոն արքեպիսկոպոսը, Հանգուցեալը այցելութիւն էր գնացել Գլադստոնի մօտ և նորա ընտանիքի անդամների հետ (միայն ինքը Գլադստոն տկար լինելով տանն էր մնացել) գտնուում էր եկեղեցւում, երբ յանկարծակի ժամասացութեան միջոցին կաթուածահար եղաւ և անզգայ վիճակի մէջ քահանայի տունը տարուելով քիչ յետոյ, 11 ժ. 35 ր. ին, աւանդեց հոգին, Այդ անակրնկալ դիպուածը ցնցող տպաւորութիւն գործեց հարկաւ ոչ միայն արքեպիսկոպոսի ներկայ գտնուող կրնոյ, Գլադստոնի և նորա տան անդամների, այլ և ողջ անգլիկան հասարակութեան վերայ, Թագուհուց սկսած ամենքը շտապեցին իրենց խորին ցաւակցութիւնը յայտնել տիկին Բենսոնին, Հոկտ. 4/16-ին հանգուցեալը մեծ շուքով, բազմաթիւ բարձրատիճան հոգեւորականների և աշխարհականների ներկայութեամբ, թաղուեցաւ Անտրըրըրի մայր եկեղեցւում, ուր նա առաջին թաղուողն է կրօն. վերանորոգութիւնից յետոյ, մինչ իւր նախորդները Ազգիկոստոնի փոքրիկ գերեզմանատանն են թաղուել, The Christian World թերթը հետեւեալ տեղեկութիւններն է հաղորդում նորա կեանքի մասին, նա ծնուել է 1829 թ-ին Բիրմինհամում հասարակ ծնողներից, Աւարտելով իւր ուսումը 1853-ին Վեմբրիջում՝ նա ուսուցչութիւն էր անում մինչև 1859 թիւը, երբ վերատեսուէչ նշանակուեցաւ Վիլլինգտոն դպրոցի և տասնեւերեք տարի վարելով այդ

պաշտօնը՝ քայքայեալ, աննշան դրութիւնից մեծ պայծառութեան հասցրեց զպրօքը և անուանի դարձրեց շրջակայքում 1872 թ-ից սկսած հետզհետեւ յառաջ գնալով եկեղեցական ասպարէզի վերայ՝ 1877-ին նա նշանակուեցաւ Տրուբըրի վերահաստատեալ թեմի եպիսկոպոս և այստեղ եկեղեցական փարչութեան մէջ անխնայ գործունէութիւն ցոյց տալուց և մի քանի առաջնակարգ զպրօքական հաստատութիւններ կանգնելուց զատ՝ նշանաւոր եղաւ մանաւանդ նորանով, որ կառուցեց ս. Պողոսի տաճարից յետոյ Անգղիայի ամենամեծ մայր եկեղեցին, 1882 թ-ին, երբ մեռաւ Անտրըրրիի Տայտ արքեպիսկոպոսը, այն ժամանակուայ նախարարապետ Պապստոնի առաջարկութեամբ նորա փոխարէն Դր. Բեննոն ընտրուեցաւ այդ բարձրագոյն պաշտօնի համար, Թէեւ անձամբ անգլիկան «բարձր» եկեղեցւոյ կողմնակից՝ նա այնպիսի մեղմ ընթացք է ունեցել միշտ, որ ոչ մի կուսակցութիւն նորան իսկական հակառակորդ համարել չէ կարող, և այսօր ամենքը սրտանց ցաւում են նորա մահուան վրայ, Այդ պատճառաւ և 1890 թ-ին Աինկոնի ժողովով նա յաջողութեամբ կարողացել է «ծիսասէր» և «աւետարանական» կուսակցութիւնների մէջ եղած վէճը վերջացնել, նորա միւս նշանաւոր գործն է անգլիկան եկեղեցւոյ Ամերիկայում և գաղթական երկրներում ունեցած բոլոր ճիւղերի միացումը, որ արտայայտուեցաւ 1888 թ-ի «Համայնանգլիկան խորհրդով», նորա նախագահութեամբ, Բեննոն՝ արքեպիսկոպոսը իրրեւ լորդերի պալատի անդամ, կամ իրրեւ գիտնական և փարչական անձն՝ այն նշանակութիւնը չէ ձեռք բերել, ինչ որ իւր անմիջական և ուրիշ նշանաւոր նախորդները, բայց եղել է մի հոգեւոր պետ, որով իւրաքանչիւր կրօնական համայնք պարծնեալ կարող էր, նորա տաննէն ստանալով կառավարութեան ներքոյ անգլիկան եկեղեցին ներքուստ և արտաքուստ մեծապէս յառաջագիմել է և ճոխացել, նա թողել է մի շարք գրուածներ կրօնական և մասամբ զպրօքական խնդիրների վերաբերեալ, նորա երկու որդիներն ևս իրրեւ հեղինակ յայտնի են, — Մահուան օրը կիրակի երեկոյան Համարդենի եկեղեցւում աւագերէցը մի սրտաշարժ քարոզ խօսելով յիշատակեց, որ Բեննոն արքեպիսկոպոսի սրտի վրայ ճնշող զգեստն օր մտածումներեցից մէկը Հայերի կրած տառապանքն էր:

— Դր. Բեննոնի տեղ Անտրըրրիի նոր արքեպիսկոպոս ընտրուել է Լոնդոնի լորդ—եպիսկոպոս Դր. Տէմպլ, և Թագուհին շտապել է հաստատել այդ ընտրութիւնը, Հատերի համար անսպասելի է եղել նորա ընտրութիւնը, որովհետեւ թէպէտ նոր արքեպիսկոպոսն անուանի և աչքի ընկնող արժանեաց տէր անձնաւորութիւն է, բայց 75 տարեկան մի հիւանդոտ ծերունի լինելով գժուար կարող է

իւր ծանր պաշտօնի հետ կապուած բոլոր պարտականութիւնները կատարել, Սակայն մի և նոյն ժամանակ իրրեւ շատ խիստ և զօրեղ կամքի տէր մարդ, նա յարմար է համարուում ղեկավարելու այն մեծ ժողովներն ու եկեղեցական ձեռնարկութիւնները, որ յաջորդ տարի պետք է տեղի ունենան:

— Անհնարին է հաշիւ տալ այն բոլոր ժողովների և ցոյցերի մասին, որոնք տեղի են ունեցել Անգլիոյ մէջ վերջին ամիսների ընթացքում ի նպաստ Հայոց, Կ. Պոլսի կոտորածից յետոյ գրեթէ ամբողջ երկիրն ոտքի կանգնեցաւ այստեղ իւր զայրոյթն արտայայտելու համար, և բացի այն բազմաթիւ քաղաքական ժողովներից, որոնց մասնակցել են Լոնդոնից սկսած մինչև յետին գիւղի բնակիչները, և որոնց զլուխ են Հայդըպարկի և Սէն — Քէմս սրահի մեծ ցոյցերը, եռանդուն կերպով գործում էր մանաւանդ հոգեւորականութիւնը ամբիոնի վրայից, ժողովներում և եկեղեցական մեծ համախմբութիւններում, ինչպէս օր. «Եկեղեցական վեհաժողովը» (Church congress), «Կոնգրեգացիոնալների Միութիւնը» (Congregational Union) ևլն, Սակայն գործնական հետեանքն այս բոլորից առայժմ այն է միայն, որ գումարներ ժողովուեցան և միջոցներ ձեռք առնուեցան պատսպարելու արտասահման գաղթող հայերին:

ԲՈՂՈՔԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ.

ԳԵՐՄԱՆԻԱ.

Չնայելով այն արգելքներին, որ այստեղ կառավարութիւնը և ամենօրեայ մամուլը հանեցին հայկական խնդրի արծարծման դէմ, այդ խնդրի բարեկամները եռանդով շարունակում են իրենց գործունէութիւնը, նոցա պարագլուխներն են պատուր Լոման, որ զխաւորապէս հարաւային և արեւմտեան Գերմանիայում է գործում՝ զուտ քրիստոնէական շրջաններում, և արդէն ամենքին յայտնի պատուր Լեպսիւս, որ իւր իրրեւ ականատեսի կրակոտ յօդուածներով և ահաւելի անցքերի ճշգրտապատում նկարագրութեամբ հասարակութեան աւելի ընդարձակ խաւերի վերայ է կամենում ազդել, Վերջինս ամբողջապէս իւր պաշտպանած դատին նուիրուելու համար կէս տարով արձակուող էր խնդրել պաշտօնից, բայց հոգեւոր իշխանութիւնը մերժեց նորա խնդիրը, հարկաւ միայն կառավարութեան հաճոյ լինելու և նորա առաջ արգելք դնելու նպատակով, Սակայն Դր. Լեպսիւս առանց տատանուելու հրաժարուեցաւ բոլորովին պաշտօնից՝ զօհելով այսպէս գաղափարի համար իւր ապահով դիրքը:

Նորա նորերս լոյս տեսած գրքի մասին, որ կրում է՝ «Բողոք քրիստոնեայ մեծ պետութիւնների դէմ և հրաւեր քրիստոնեայ Գերմանիային»

վերնացիքը մի գեղեցիկ և ազնիւ զայրոյթով լի յօգուած է գրել *Christliche Welt* № 43-ում պրոֆ. Գիլցերի, «Իմ բոլոր ծանապարհորդութեան մէջ փոքր Ասիայում, ասում է Լեպսիւս, ես ոչ մի մահմեդականի չեմ պատահել, որ կատարուած անցքերի մասին դատելով ինքն ըստ ինքեան հասկանալի չհամարէր, թէ հայ ժողովրդին կոտորելու և կողոպտելու հրամանը կառավարութիւնից է տրուել և համաձայն է սուլթանի կամքին»։ Եւ այսպէս մէկը միւսից աւելի զարհուրելի պատկերներ գծելով և նոյն իսկ զեսպանատանց տեղեկութիւնների վերայ հիմնուած ապացուցանելով, որ այդ բոլորի սկզբնապատճառը և ուղղութիւն տուողը արդարեւ տաճիկ կառավարութիւնն է եղել՝ նա րացականում է։ «Մի՞թէ այս արիւնը չպէտք է մինչև երկինք աղաղակէ, Մի՞թէ կանանց և աղջիկների հեծեծանքը պէտք է չհասնէ Ամենակալի աշխարհ, եթէ այս աշխարհի զօրեղները շարունակեն իսկ խուլ մնալ, Այո՛, քանի ճշմարիտ է որ երկրներում մի Աստուած կայ՝ նա պէտք է անէ իւր գաղտնաստանը»։ Լեպսիւս ցոյց է տալիս այնուհետև հայերի անմեղութիւնն այս բոլոր կոտորածներում և թէ ինչպէս այն գործիչները, որոնք իւր շարժման սկիզբ են դրել, եթէ մեղաւոր էլ լինէին, բուն երկրի ծնունդ չեն, այլ դրսից եկած խորթ պատուաւոր, Գիլցեր իւր կողմից խիստ խօսքերով յանգիմանելով այն անտարբերութիւնը, որով քրիստոնէայ Եւրոպան առհասարակ վերաբերուել է դէպի հայերի տառապանքը, խոստովանում է, որ «ոչ մի մեծ պետութիւն այնքան պակաս ազնիւ վարմունք ցոյց չէ տուել հայկական տագնապի միջոցին, որքան գերմանական կառավարութիւնը և գերմանացի ժողովուրդը»։ Այն առարկութիւնների դէմ, թէ Գերմանիան իրական օգնութիւն կարող չէ ցոյց տալ հայերին՝ նա ասում է. «ընդհանրապէս այն զօրեղ րարոյական և նիւթական ձեռնառութիւնը, որ սա ցոյց է տալիս դէպի Բարձր Դուռը, երայտագիտութեամբ և ընդունուում վերջինիս կողմից և ոյժ է տալիս նորան հակառակելու երեք բարենորոգում պահանջող պետութիւններին, Բայց մեր քաղաքականութեան այս ընթացքը նորան պատիւ չէ բերում, Յետոյ եկող սերունդներ պէտք է կարմըրին մի օր դորա համար»։

— Գերմանական բաղմամբ ժողովներից, որոնց մէջ Հայոց մասին խօսք է եղել, ամենակարեւորը Գուտաւ — Ադոլֆ ընկերութեան սեպտ. 2-45/14-17-ին Դեսսաւ քաղաքում կայացած 49-րդ ընդհանուր ժողովն է։ Այդ ընկերութիւնը հիմնուել է 1832 թ.-ին բողոքական եկեղեցւոյ շահերը օտար դաւանութեանց նկատմամբ, մանաւանդ կաթոլիկ երկրներում, պաշտպանելու նպատակով, Այժմ նա այնքան ընդարձակուել է, որ անցեալ տարի 1849 արանց և 538 կանանց մասնաճիւղեր ունէր բողոք-

քական աշխարհի բոլոր կողմերում, և 2,056,133 մարկ ընդհանուր եկամուտ է ժողովել՝ գործ դնելով եկեղեցիների շինութեան, աղքատ համայնքների օժանդակութեան և այլ այդպիսի պէտքերի համար։ — Արդ, հանդիսականներից շատերը հետաքրքրութեամբ սպասում էին, թէ ինչպէս կվերաբերուի ընկերութիւնը դէպի հայկական խնդիրը, մանաւանդ որ Հալլէի մասնաճիւղի կողմից առաջարկ կար՝ ուղղակի Վայսեր դիմումն անելու, որ օգնէ հայերին, Սակայն ժողովն այսպիսի միջամտութիւն իւր գործունէութեան շրջանակից դուրս համարեց և բաւականացաւ մի որոշումով, ուր ցաւակցութիւն և զայրոյթ էր յայտնուում քրիստոնէից կոտորածի համար և ցանկութիւն օգնելու տառապալններին ամեն կերպի ի մասնաւորի ընկերութեան կողմից նուիրած մի խոշոր գումարով յօգուտ աւել տարանական որբերի։

— Հայաստանում տիրող թշուառութեան օժանդակիչ գերմանական յանձնաժողովը, որ այժմ բաղմամբ ձեւեր ունի, կըրկին օգնութեան մի հրաւեր է հրատարակել 650 ստորագրութիւններով, Ստորագրողների թուում շատ կան այնպիսի առաջնակարգ անձնաւորութիւններ, ինչպէս կոմս Երնստոֆֆ, Փաբեր (պալատական աւագերէց) Դրեանդր, Բրաուն և ևն։

ԶՈՒՆՅԵՐՈՒՆ.

Հայկական դատի պաշտպանութեան համար առանձին եռանդ է ցոյց տալիս մանաւանդ Զուլիգերիան, Բացի այն, որ համեմատաբար մեծ քանակութեամբ դրամ է ժողովուրդում այստեղ ի նպաստ տառապալնների՝ բաղմամբ ժողովներում ցոյցեր են եղել կատարուած անօրէնութեանց դէմ, այսպէս Լաուզաննում սեպտ. 7-ին մի մեծ ժողով գումարուեցաւ, ուր երկու հայեր՝ Զէքի Էֆէնդի Գանթարեան և պրոֆ. Թումայեան նկարագրեցին Ցաճկաստանում տիրող բռնութիւնն ու անիրաւութիւնը և հայոց կրած տառապանքը, և ուր մի յանձնաժողով ընտրուեցաւ հրաւիրելու ամբողջ զուլիգերական ազգին, որ իւր զայրոյթն արտայայտէ և մեծ պետութիւններին դիմէ սարսափներին վերջ տալու։ Այս ժողովում գլխաւոր ճառախօսներից մէկն էր նաև „Gazette de Lausanne“ թերթի խմբագիրը, որ իւր թերթով աշխատում է ամեն կերպ հասարակաց ուշադրութիւնը զարթեցնել հայերի համար։

